պարագային խնդիրն այն է միայն, որ թղթերի հատվածական ներբերումների բովանդակային մասը հաճախ չի համապատասխանում թվյալ թղթին պատմիչի բնորոշումին: Այդպես՝ վերը հիշատակված Դավիթ և Մելքիսեթ կաթողիկոսների՝ Սրապիոն վարդապետին ուղարկած նամակը Դավրիժեցին անվանում է «***նամակ ողջունի և սիրոյ***», սակայն մեջբերված հատվածը բովանդակում է միայն տարազման երկրորդ մասը, իսկ ահա ողջույնը բացակայում է: Այն, ի դեպ, թղթառաջքին բնորոշ ներտեքստային միավոր է:

Այդուհանդերձ, Դավրիժեցու «առանձնացրած» տեսակներն ինքնին հետաքրքիր են և բազմազանություն են հաղորդում միջնադարյան թղթի ժանրային նկարագրին: Պատմիչը, հիշատակելով վրաց թագավոր Լավասափին և նրա մորը ուղարկած Շահ-Աբասի նամակները, դրանք անվանում է «***թուղթս պատրանաց և խաբէութեան***» (էջ 128), թեպետ, հարկ է նշել, որ սա զուտ հեղինակային բնութագրում է, քանզի հենված է ոչ թե նամակի հղացքին, այլ թելադրված է հեղինակի անձնական վերաբերմունքից բխող նկատառումներով: Հատվածաբար մեջբերված Խոր Վիրապի Մանվել և Հավուց Թառի Մկրտիչ եպիսկոպոսների՝ Սահակ կաթողիկոսին ուղղված նամակը, որը վերջինս ստանում է հուսահատական տրամադրության մեջ, Դավրիժեցին անվանում է «թուղթս յուսադրական բանիւ» («առաքեցին ***թուղթս յուսադրական բանիւ*** առ Սահակն ի Խոյ» (էջ 206))[11]: Նամակագիրները, տեղեկանալով կաթողիկոսի ընկճված վիճակի մասին, բնականաբար, նրան հղել են հուսադրական բովանդակությամբ նամակ:

[11] Ավելորդ չէ նշել, որ Առաքել Դավրիժեցու պատմագրքի աշխարհաբար թարգմանության մեջ (Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988) թարգմանիչը՝ Վարագ Առաքելյանը, այդ նամակը ներկայացրել է որպես ***ուղղակի վկայված*** նամակ (տե՛ս էջ 188), այնինչ՝ բնագրում այն ***պատմված*** նամակ է: Տեքստի այդ, թվում է՝ աննշան աղավաղումը մեծապես ազդում է պատմագրքի ժանրային նկարագրի ամբողջական ընկալման վրա, և, ընդհանրապես, կոպիտ միջամտություն է բնագրին: Մանավանդ որ՝ դա միակ օրինակը չէ: